պէս յայտ առնեն յիշատակարանք, և Հ. Մ. Չամչեան. Հատ. Գ. Եէս. 628։ Փիլիպպոս Կաթուղիկոս միաբանեալ ընդ Աստուածատուր Պատրիարքին և ընդ Կաթուղիկոսին Սսոյ եառն յօրինել զյատակ տաճարին Ս. Յակոբայ զոյնզգոյն մանր քարամբք՝ և զբեմն Աւագ խորանին բարձրացուցին, և վիաչկալ խորանին ոսկով պատեցին՝ այսոցիկ գործոց ըսկիզբն արարին յաւուրս Բուն բարեկենդանի և աւարտեցին ի Նոր կիւրակէի, ապա օրհնութեամբ և հոգեւոր ուրախութեամբ կատարեցին զնաւակատիս նորին։ Փիլիպպոս Կաթուղիկոս կացեալ յերուսաղէմ ամիսս իբրեւ ՟ե և աւելի եւս, դարձ արար ի Կոստանդինուպոլիս. եւ Տ. Ներսէս Կաթուղիկոսն Սսոյ յԱթոռն իւր։ Ի յօրինուածոց անտի մնացեալ են ցարդ անեղծ յատակ դասուն եւ Աւագ խորանին։

Միաբանք Ցունաց զչարեալ իմն էին ընդ գործս Հայոց և ընդ յօրինուածս տաճարին, եւ մանաւանդ իսկ յաւուրց անտի Գրիգորի Պատրիարքի սակս խնդրոյ Ծառափատկին, յոյր սակս բանս եդեալ ընդ Բդեշխի քաղաքին, ամբաստանեցին զՀայս և յարուցին վէճս, որպէս թէ յափշտակեալ իցեն զերկու սենեակս եւ զմի մասն պարտիզին որ ի Բեթղեհէմ, և այլ ոսկին նման բանք։ Իսկ Բդեշխն եւս կազմել ժողով մեծ ի դատաստանի, ուր էին վոխանակ Բդեշխին և մեծամեծք այլազգեաց, և ի դրդմանէ Ցունաց եկեալէին խուռն բազմութեամբ բնակիչք Բեթղեհէմ դիւղի, և խառնաձայն իմն աղաղակէին յատենի անդ թէ՝ գերեզմանատունն ի դաւթի եկեղեցւոյն Բեթղեհէմի ի հարցոյ, ուր թաղեալ կան ոսկերք նախնեաց մերոց. Հայք ի չինել և ի նորոգել զերկուս խանս և զսենեակս ի վերայ նոցա, մուծին զջրհորն մեծ ի ներքս և յափշտակեցին զմի մասն գերեզմանատան մերոյ, և արարին պարտէզ, սընկեալ ի նմա որթս այգւոյ և ծիթենիս, և փակեցին զճանապարհն, որ ի կողմն վանաց նոցին, մտանել և թաղել զմեռեալս. և խնդրէին զի դատաւորն և ատեանն երթիցեն ի քննութիւն տեղւոյն. և արձանագրեացեն ըստ օրինի։ Համեալ ընդ այս դատաւորին՝ և չուեալ գնաց բազմութեամբ ի Բեթղեհէմ, ընդ որս էին Տոսիթիոս Պատրիարքն Ցունաց իւրովք պարագայիւք՝ և բազմութիւն ֆել-